Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. մարտի 30-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև թիվ CAM 1007 02 E ֆինանսավորման համաձայնագրի անգլերեն ստորագրված տեքստի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն

ՀՖԳ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ CAM 1007 02 E

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝

Թվագրված 30-ը մարտի, 2018,

ՀԱՐԳԱՅՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
(Գործակալություն)

և

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
(Շահառու)

միջև

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....4

1.1. Սահմանումներ.....4

1.2. Մեկնաբանություն.....5

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ, ՆՊԱՏԱԿ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....5

2.1 Դրամաշնորհ.....5

2.2 Նպատակ.....5

2.2 Մոնիտորինգ.....5

2.4 Նախապայմաններ.....5

3. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՈՒՄ.....6

3.1 Մասհանման հայտ.....6

3.2 Վճարման մեխանիզմներ.....6

3.3 Մասհանման վերջնաժամկետ.....9

4. ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՀԵՏԱՁԳՈՒՄ ԿԱՄ ՄԵՐԺՈՒՄ.....9

4.1 Ծրագրի փաստաթղթեր.....9

4.2 Սխալ ներկայացում.....9

4.3 Պարտավորվածություններ կամ պարտավորություններ.....9

4.4 Անօրինականություն.....10

4.5 Էական բացասական փոփոխություն.....10

4.6 Ծրագրի հետկանչ կամ կասեցում.....10

4.7 Լիազորություններ.....10

4.8 Ազատ փոխարկելիության և անվճար փոխանցման կասեցում.....10

4.9 Վարկային համաձայնագրի առնչությամբ Շահառուի կողմից դեֆոլտ.....10

4.10 Վերջնական շահառուի կողմից դեֆոլտ.....11

4.11 Միջամտություն լիազորված մարմնի կողմից.....11

5. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ.....11

5.1 Իրավասություն և լիազորություն.....11

5.2 Պարտադիր պարտավորություններ.....11

5.3 Հակասության բացակայություն այլ պարտավորությունների հետ.....12

5.4 Ապացույցի վավեր և ընդունելի լինելը.....12

5.5 Ծրագրի թույլտվություններ.....12

5.6 Գնումներ.....12

5.7 Միջոցների ծագումը, կոռուպցիոն գործողություններ, խարդախություն և հակամրցակցային գործելակերպ.....12

6. ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....13

6.1 Լիազորություններ.....13

6.2 Ծրագրի փաստաթղթերը.....13

6.3 Համապատասխանություն օրենքներին և կանոնակարգերին.....13

6.4 Գնումներ.....13

6.5 Լրացուցիչ ֆինանսավորում.....14

6.6 Ծրագրի իրականացումը.....14

6.7 Միջոցների ծագումը, կոռուպցիոն գործողություններ, խարդախության կամ հակամրցակցային գործելակերպի բացառում.....14

6.8 Բնապահպանական և սոցիալական պարտավորություն.....14

6.9 Ծրագրի հաշիվներ.....15

6.10 Ենթադրամաշնորհ - Վերջնական շահառուի մոնիտորինգ.....15

6.11 Էքսպերթայզ Ֆրանսիայի կարգավիճակը.....16

6.12 Ծրագրի պահպանում....16
6.13 Ստուգումներ....16
6.14 Ծրագրի գնահատում....17
7. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ....17
7.1 Առաջընթացի հաշվետվություն....17
7.2 Տեղեկատվություն – այլ....17
7.3 Վերջնական շահառուի վերաբերյալ տեղեկատվություն....18
8. ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾԱԽՔԵՐ – ԳՐԱՆՑՈՒՄ....18
9. ՏԱՐԲԵՐ ՀԱՐՑԵՐ....18
9.1 Լեզու....18
9.2 Մասնակի ոչ վավեր լինելը....18
9.3 Իրավունքներից հրաժարվելու բացառում....18
9.4 Հանձնարարում....18
9.5 Իրավական ուժ....18
9.6 Ամբողջ համաձայնագիրը....18
9.7 Փոփոխություններ....18
9.8 Գաղտնիություն – Տեղեկատվության հրապարակում....18
9.9 Վաղեմության կարգավիճակ....20
10. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ....20
10.1. Գրավոր ծանուցումներ....20
10.2. Ստանալը....20
10.3. Էլեկտրոնային հաղորդակցություն....20
11. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ....21
11.1. Ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը....21
11.2. Դադարեցում....22
12. ՂԵԿԱՎԱՐՈՂ ՕՐԵՆՔ, ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ....22
12.1. Ղեկավարող օրենք....22
12.2. Ընդդատություն....22
12.3. Իրավաբանական հասցեի ընտրություն....22

ՀԱՎԵԼՎԱԾ 1Ա – ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ....24
ՀԱՎԵԼՎԱԾ 1Բ – ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ....32
ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ....33
ՀԱՎԵԼՎԱԾ 3 – ԻՆԴԻԿԱՏԻՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆ....35
ՀԱՎԵԼՎԱԾ 4 – ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ....36
ՀԱՎԵԼՎԱԾ 5 - ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ....38
ՀԱՎԵԼՎԱԾ6 – ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՏՈՒԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ....39
ՀԱՎԵԼՎԱԾ 7 – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿԸ ES ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ, ՈՐՈՆՔ ՇԱՀԱՌՈՒՆ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ Է ՀՐԱՊԱՐԱԿԵԼ....40

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(1) **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝**
ի դեմս ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյանի, ով պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու սույն Համաձայնագիրը
(Շահառու),

ԵՎ

(2) **ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝** ֆրանսիական պետական կազմակերպություն, որը ղեկավարվում է Ֆրանսիայի օրենքով, գրանցված գրասենյակը՝ 5, Rue Roland Barthes, 75598 Paris Cedex 12, France, հասցեում, գրանցված Փարիզի առևտրի և ընկերությունների ռեգիստրում՝ 775 665 599 համարի ներքո, ի դեմս Գայել Ասայագի՝ լիազորված որպես Հարավային Կովկասի հարցերով ներկայացուցչական գրասենյակի ղեկավար, ով պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու սույն Համաձայնագիրը
(Գործակալություն),
(այսուհետ՝ միասին **Կողմեր**, իսկ առանձին՝ **Կողմ**),
ՄԻՋԵՎ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ՝

Ա) Շահառուն Կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի միջոցով (այսուհետ՝ Վերջնական շահառու) մտադիր է իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ Միասնական հարկային օրենսգրքի ամբողջական կիրարկումը նախապատրաստելու համար, ֆիսկալ բարեփոխումներին հետամուտ լինելու և ֆիսկալ վարչարարությունն ամրապնդելու համար (**Ծրագիր**), ինչպես հետագայում նկարագրված է 2-րդ Հավելվածում (ՀԱՎԵԼՎԱԾ 2 – Ծրագրի նկարագրություն),

Բ) Շահառուն Գործակալությանը խնդրել է տրամադրել դրամաշնորհ՝ Ծրագիրը ամբողջապես ֆինանսավորելու նպատակով,

Գ) ԶՖԳ խորհրդի հմ. C20160324 որոշման համապատասխան՝ թվագրված 2016 թվականի սեպտեմբերի 28-ին, Գործակալությունը համաձայնել է Շահառուին տրամադրել Դրամաշնորհը՝ սույն Համաձայնագրի ժամկետներին և պայմաններին համաձայն:

ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հետևյալի մասին.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Սահմանումներ

Սույն Համաձայնագրում մեծատառով գրված բառերն ու արտահայտությունները (ներառյալ վերոնշյալ դեկլարատիվ մասում և հավելվածներում օգտագործվողները) ունեն այն նշանակությունը, որը նրանց վերագրվում է 1Ա Հավելվածում (Սահմանումներ), եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

1.2. Մեկնաբանություն

Սույն Համաձայնագրում օգտագործված բառերն ու արտահայտությունները պետք է մեկնաբանվեն 1Բ Հավելվածի (Մեկնաբանություն) դրույթներին համապատասխան, եթե հակառակը նախատեսված չէ:

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ, ՆՊԱՏԱԿ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Դրամաշնորհ

Սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան՝ Գործակալությունը Շահառուին տրամադրում է ընդհանուր առավելագույնը հինգ հարյուր հազար եվրո (500,000 եվրո) գումարի չափով Դրամաշնորհ:

2.2 Նպատակը

Շահառուն պետք է օգտագործի սույն Դրամաշնորհից բոլոր միջոցները բացառապես Թույլատրելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ բացառությամբ հարկերի, տուրքերի և ցանկացած ձևի գանձումների, համաձայն Ծրագրի նկարագրությանը, ինչպես սահմանված է 2-րդ Հավելվածում (Ծրագրի նկարագրություն), և Ֆինանսական պլանի՝ սահմանված 3-րդ Հավելվածում (Ինդիկատիվ ֆինանսական պլան):

Միջոցները ենթադրամաշնորհի տեսքով կտրամադրվեն Շահառուի կողմից Վերջնական շահառուին՝ որպես դրամաշնորհ, Գործակալության համար ընդունելի պայմաններով:

2.3 Մոնիտորինգ

Գործակալությունը չի կարող պատասխանատու լինել Շահառուին տրամադրված որևէ գումարի օգտագործման համար, որը չի համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին:

2.4 Նախապայմաններ

ա) Ոչ ուշ, քան մինչև ստորագրման ամսաթիվը Շահառուն Գործակալությանն է տրամադրում 4-րդ Հավելվածի (Նախապայմաններ) I մասում նշված բոլոր փաստաթղթերը:

բ) Շահառուն պարտավորվում է Գործակալությանը ներկայացնել Մասհանման հայտ, եթե.

(i) Առաջին Մասհանման դեպքում՝ Գործակալությունն ստացել է բոլոր փաստաթղթերը, որոնք թվարկված են Հավելված 4-ի ՄԱՍ II–ում (Նախապայմաններ), և ծանուցել է Շահառուին, որ տվյալ փաստաթղթերը բավարար են իրենց ձևով և բովանդակությամբ,

(ii) հետագա Մասհանումների դեպքում՝ Գործակալությունն ստացել է բոլոր փաստաթղթերը, որոնք թվարկված են Հավելված 4-ի (Նախապայմաններ) ՄԱՍ III–ում, և ծանուցել է Շահառուին, որ տվյալ փաստաթղթերը բավարար են իրենց ձևով և բովանդակությամբ, և

(iii) Մասհանման հայտի ամսաթվին և համապատասխան Մասհանման համար առաջարկված Մասհանման ամսաթվին սույն Համաձայնագրում սահմանված պայմանները կատարվել են, ներառյալ՝

(1) Մասհանման հայտը կատարվել է կետ 3.1-ի (Մասհանման հայտ) պայմաններին համապատասխան,

(2) կետ 4-ում (Մասհանման հայտերի հետաձգում կամ մերժում) նշված ոչ մի իրադարձություն ընթացքի մեջ չէ և չի կարող տեղի ունենալ,

(3) Շահառուի կողմից կետ 5-ի (Ներկայացուցչություններ և երաշխիքներ) առնչությամբ տրված յուրաքանչյուր ներկայացուցչություն իրական է:

3. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՈՒՄ

3.1 Մասհանման հայտ

Պայմանով, որ 2.4 (բ) կետում (Նախապայմաններ) նշված պայմանները կատարվել են, Վերջնական շահառուն կարող է մասհանել Դրամաշնորհի միջոցները մի քանի մասհանումներով, որոնք չպետք է գերազանցեն չորսը (4). առաջին մասհանումը Կանխավճարն է, որը տրամադրվում է Գործակալությանը պատշաճ կերպով Մասհանման հայտ ներկայացնելու հիման վրա:

Շահառուն լիազորում է Վերջնական շահառուին Գործակալության գրասենյակի ղեկավարին տրամադրել ցանկացած մասհանման հայտ՝ կետ 10-ում (Ծանուցումներ) նշված հասցեով: Յուրաքանչյուր Մասհանման հայտի օրինակը պետք է Վերջնական շահառուի կողմից տրամադրվի Շահառուին: Հայտերը պետք է համաստորագրված լինեն Շահառուի կողմից:

Մասհանման հայտը չի համարվի պատշաճ կերպով ներկայացված, եթե մասհանման հայտին կցված չլինեն բոլոր պահանջվող փաստաթղթերը և չհամապատասխանեն կետ 3.2-ի դրույթներին (Վճարման մեխանիզմները):

Գործակալությունը պահանջվող Մասհանումը կփոխանցի Վերջնական շահառուին, եթե սույն Համաձայնագրում ներկայացված բոլոր պայմանները բավարարվեն:

3.2 Վճարման մեխանիզմները

Միջոցները հասանելի կլինեն հետևյալ ժամկետներին և պայմաններին համապատասխան.

3.2.1. Կանխավճար [Բաղադրիչ 1-ի առնչությամբ]

Պայմանով, որ կետ 2.4 (բ)-ում (Նախապայմաններ) ներկայացված պայմանները բավարարվել են, Գործակալության կողմից տրամադրվում է հիսուն հազար եվրոյի (EUR 50,000) չափով Մասհանում մեկ եզակի կանխավճարի տեսքով (**Կանխավճար**)՝ փոխանցելով Ծրագրի հաշվին (ինչպես սահմանվում է ներքևում)՝ Բաղադրիչ 1-ի իրականացման համար (Կարճաժամկետ տեխնիկական աջակցություն):

ա) Ծրագրի հաշվի բացում

Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն բացի և պահի Ծրագրի անունով հաշիվ (Ծրագրի հաշիվը) Հայաստանի կենտրոնական բանկում («Հաշվի բանկ»)՝ որպես Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մեկ միասնական գանձապետական հաշվի առանձին ենթահաշիվ (արտահայտված եվրոյով) միայն՝ i) կանխավճարի միջոցների ստացման և ii) Թույլատրելի ծախսերի վճարման նպատակով:

Շահառուն սույնով պարտավորվում է ապահովել, որ Վերջնական շահառուն հրաժարվի, և ապահովում է, որ Հաշվի բանկը հրաժարվի հաշվանցման ցանկացած իրավունքից, որը կարող է նման կողմը ունենալ Ծրագրի հաշվի կամ Հաշվի բանկում

Վերջնական շահառուի անունով բացված որևէ այլ հաշվի առնչությամբ, կամ Վերջնական շահառուի որևէ այլ պարտքի նկատմամբ:

Այն դեպքում, երբ Հաշվի բանկը դադարում է լինել Ընդունելի բանկ, Գործակալությունը կարող է հրահանգել Շահառուին պահանջել Վերջնական շահառուից փոխարինել Հաշվի բանկը Ընդունելի բանկով: Շահառուն սույնով պարտավորվում է հրահանգել Վերջնական շահառուին իր սեփական միջոցներով անհապաղ փոխարինել Հաշվի բանկը Գործակալության առաջին պահանջի հիման վրա և Գործակալության օգտին ձևակերպել երաշխավորման մասին փաստաթուղթ:

բ) Կանխավճարի օգտագործման հիմնավորում

Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն Գործակալությանը տրամադրի՝

(i) ոչ ուշ, քան մինչև Միջոցների օգտագործման վերջնաժամկետը, Վերջնական շահառուի լիազորված ստորագրողի կողմից ստորագրված վկայական՝ հավաստիացնելով, որ Կանխավճարի հարյուր տոկոսը (100%) օգտագործվել է, և տրամադրելով համապատասխան ժամանակահատվածում Թույլատրելի ծախսերի առնչությամբ կատարված վճարումների մանրամասն բացվածքը, և

(ii) i ենթակետում նշված վկայականի ստացման ամսաթվից երեք (3) ամսից ոչ ուշ Ծրագրի հաշվի վերջնական աուդիտի հաշվետվություն (**Վերջնական աուդիտի հաշվետվություն**)՝ իրականացված Վերջնական շահառուի կողմից նշանակված՝ անկախ և հեղինակավոր աուդիտորական կազմակերպության կողմից, իսկ Գործակալությունը չառարկի աուդիտի առաքելության տեխնիկական առաջադրանքին և նշանակված աուդիտորական կազմակերպությանը: Աուդիտի բոլոր ծախսերը կատարվելու են Դրամաշնորհի միջոցներից: Շահառուն ապահովում է, որ աուդիտորական կազմակերպությունն ստուգի, որ Դրամաշնորհի ներքո կատարված և Ծրագրի Հաշվեհամարին փոխանցված կանխավճարն օգտագործվել է սույն Համաձայնագրի ժամկետներին ու պայմաններին համապատասխան:

գ) Կիրառելի փոխարժեք

Եթե որևէ Թույլատրելի ծախս արտահայտված է եվրոյից բացի այլ արժույթով, Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն փոխարկի հաշիվ-ապրանքագրի գումարը Եվրոյի համարժեք գումարով՝ համապատասխան հաշիվ-ապրանքագրի վճարման ամսաթվին օգտագործելով Հայաստանի կենտրոնական բանկի կողմից կիրառվող համապատասխան արժույթի փոխարժեքը:

դ) Միջոցների օգտագործման վերջնաժամկետ

Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն համաձայնի, որ Կանխավճարի տեսքով հատկացված բոլոր միջոցները ամբողջապես օգտագործվեն Բաղադրիչ 1-ի առնչությամբ Թույլատրելի ծախսերը ֆինանսավորելու համար՝ ոչ ուշ, քան մինչև Միջոցների օգտագործման վերջնաժամկետը:

ե) Հսկողություն – աուդիտ

Մասհանման ժամանակահատվածի ընթացքում Գործակալությունը կարող է իրականացնել կամ ապահովել, որ իր անունից երրորդ կողմն իրականացնի անսպասելի ստուգումներ, այլ ոչ թե փաստաթղթային ապացույցների համակարգային վերահսկողություն:

Աուդիտի համապատասխան ծախսերը կկատարվեն Դրամաշնորհի միջոցներից:

զ) Մինչև միջոցների օգտագործման վերջնաժամկետը կանխավճարի օգտագործման համար հիմնավորման տրամադրման բացակայություն

Գործակալությունը կարող է պահանջել, որ Շահառուն փոխհատուցի բոլոր գումարները, որոնց նկատմամբ օգտագործումը պատշաճ կերպով կամ բավարար չափով արդարացված չէ, բոլոր մնացած գումարների հետ միասին, որոնք առկա են Ծրագրի հաշվին Միջոցների օգտագործման վերջնաժամկետին: Շահառուն այդ գումարները

փոխհատուցում է Գործակալությանը դրա առնչությամբ Գործակալության ծանուցումը ստանալուց քսան (20) օրացուցային օրվա ընթացքում:

է) Փաստաթղթերի պահպանում

Շահառուն պարտավորվում է հրահանգել Վերջնական շահառուին պահպանել Ծրագրի հաշվի և Կանխավճարի օգտագործման առնչությամբ փաստաթղթային ապացույցները և մյուս փաստաթղթերը Մասհանման վերջնաժամկետից հետո տասը (10) տարի ժամկետով:

Շահառուն պարտավորվում է, Գործակալության պահանջով, Գործակալությանը կամ Գործակալության կողմից նշանակված ցանկացած աուդիտորական կազմակերպության տրամադրել տվյալ փաստաթղթային ապացույցները և այլ փաստաթղթեր:

3.2.2. Ուղղակի վճարումներ [Բաղադրիչ 2-ի առնչությամբ]

Պայմանով, որ կետ 2.4(բ)-ում (Նախապայմաններ) նշված պայմանները կատարվել են, Մասհանումները Գործակալության կողմից տրամադրվում են Կապալառուին (Կապալառուներին) Ուղղակի վճարումների տեսքով՝ չորս հարյուր հիսուն հազար եվրոն (450,000 եվրո) չգերազանցող գումարի չափով, Բաղադրիչ 2-ի իրականացման համար (Երկարաժամկետ տեխնիկական աջակցություն):

ա) Շահառուն ընդունում և համաձայնում է, որ Վերջնական շահառուն կարող է պահանջել, որ Մասհանման միջոցները տրամադրվեն անմիջապես Կապալառուին (Կապալառուներին) Ծրագրի իրականացման նպատակով ապրանքների, ծառայությունների և/կամ այլ աշխատանքների մատակարարման համար կնքված՝ գնման պայմանագրի շրջանակներում՝ Բաղադրիչ 2-ի առնչությամբ Թույլատրելի ծախսերը վճարելու համար: Այդ նպատակով Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն Գործակալությանը հայտնի Մասհանումը անմիջապես Կապալառուին(ներին) վճարելու համար անհրաժեշտ ցանկացած հրահանգ և, անհրաժեշտության դեպքում, Հավելված 4-ի (Նախապայմաններ) ՄԱՍ III-ում թվարկված փաստաթղթերը:

Ավելին, Շահառուն պարտավորվում է կազմել կամ ապահովում է, որ որևէ այլ լիազորված մարմին կազմի որևէ փաստաթուղթ կամ վարչական ակտ՝ Կապալառուին(ներին) ուղղակի վճարումները լիազորելու համար, և ապահովում է, որ նման փաստաթուղթը կամ վարչական ակտը վավեր լինի Գործարքի համաձայնագրի ընթացքի համար:

Համապատասխանաբար՝ Շահառուն Գործակալությանը նշանակում է որպես վստահված անձի, իսկ Գործակալությունը համաձայնում է Մասհանման միջոցները Վերջնական շահառուի անունից անմիջապես Կապալառուին(ներին) վճարել՝ առանց Շահառուի կողմից հետագա գործողությունների:

Այնուհետև Կապալառուն(ները) Վերջնական շահառուին են տրամադրում առավելագույնը երեք հաշիվ-ապրանքագիր: Հաշիվ-ապրանքագիրը հաստատելուց հետո Վերջնական շահառուն իր ստորագրությամբ նույնը Գործակալությանն է ներկայացնում՝ համապատասխան մասհանումների վճարումները հայցելու նպատակով:

Այն դեպքում, երբ Գործարքի համաձայնագրի գործողությունը դադարեցվում է, Վերջնական շահառուն տեղեկացնում է Գործակալությանը, որն էլ իր հերթին չեղարկում է Մասհանումները առաջիկա դադարեցման մասին ծանուցման օրվա դրությամբ: Կապալառուին(ներին) վճարվելիք գումարները կտրամադրվեն ապառքներով և Վերջնական շահառուի կողմից հաստատված հաշիվ-ապրանքագիր կազմելով և վճարման մասին Գործակալությանը ծանուցելով:

Շահառուն պետք է ապահովի, որ Վերջնական շահառուն պատասխանատու լինի Կապալառուին(ներին) ուղղակի վճարման վավերականության առնչությամբ ցանկացած իրավական, հաշվապահական կամ վարչական կանոնին համապատասխանելու համար:

բ) Շահառուն սույնով լիազորում է Գործակալությանը, իր դիմումի հիման վրա, Մասհանման միջոցներից ուղղակի վճարումներ կատարել Վերջնական շահառուի կապալառուներին՝ վերոնշյալ «ա» կետի համաձայն: Գործակալությունից չի պահանջվում ցանկացած ժամանակ ստուգել, թե արդյոք որևէ բնույթի սահմանափակում կա Մասհանման վճարման նկատմամբ, թե ոչ: Գործակալությունն իրեն իրավունք է վերապահում մերժել նման հայցը, եթե տեղեկանում է որևէ նման սահմանափակման մասին:

Գործակալությունը որևէ կերպ պատասխանատվություն չի կրում Շահառուի նկատմամբ նման Մասհանումների առնչությամբ, իսկ Շահառուն հրաժարվում է ցանկացած գործողությունից, որը կարող է ունենալ Գործակալության նկատմամբ այս առնչությամբ: Շահառուն փոխհատուցում է Գործակալությանը ցանկացած ծախսի, կորստի կամ պարտավորության դիմաց, որ կրում է Գործակալությունը նման մանդատի առնչությամբ՝ Գործակալության նկատմամբ երրորդ կողմի գործողությունների հետ կապված:

3.3. Մասհանման վերջնաժամկետ

Վերջնական մասհանման հայտն ստացվելու է Գործակալության կողմից՝ Մասհանման վերջնաժամկետից ոչ ուշ, քան տասնհինգ (15) օրացուցային օր առաջ: Եթե նման հայտն ստացվել է Մասհանման վերջնաժամկետին նախորդող ամսվա ընթացքում, այն հաստատագրվում է Գործակալությանը և ուղարկվում պատվիրված փոստով՝ հայցելով ստացման մասին հավաստիացում:

Դրամաշնորհի որևէ մաս, որ մնում է չվճարված, նման Մասհանման վերջնաժամկետին ինքնաբերաբար չեղարկվում է:

4. ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՀԵՏԱՁԳՈՒՄ ԿԱՄ ՄԵՐԺՈՒՄ

Գործակալությունն իրեն իրավունք է վերապահում կասեցնելու կամ հետաձգելու կամ վերջնականապես մերժելու ցանկացած Մասհանման հայտ հետևյալ դեպքերից որևէ մեկի տեղի ունենալու դեպքում.

4.1 Ծրագրի փաստաթղթեր

Ծրագրի ցանկացած փաստաթուղթ կամ դրանով սահմանված որևէ իրավունք կամ պարտավորություն դադարում է ամբողջապես ուժի մեջ լինել և գործել կամ ենթակա է դադարեցման մասին ծանուցման կամ դրա վավերականությունը, օրինականությունը կամ ուժի մեջ մտնելը վիճարկվում է:

4.2 Սխալ ներկայացում

Սույն Համաձայնագրում Շահառուի կողմից ներկայացված ներկայացուցչություն կամ տրված երաշխիք, ներառյալ՝ կետ 5-ում (Ներկայացուցչություններ և երաշխիքներ) կամ Շահառուի կողմից կամ նրա անունից սույն Համաձայնագրի ներքո կամ դրա առնչությամբ ներկայացված որևէ այլ փաստաթուղթ, որ ճիշտ չէ կամ մոլորեցնող է այն կազմելու կամ ներկայացնելու պահին կամ այն ժամանակ, երբ համարվում էր, որ այն կազմված կամ ներկայացված է:

4.3 Պարտավորվածություններ կամ պարտավորություններ

Շահառուն չի կատարում Համաձայնագրի որևէ պայման՝ ներառյալ կետ 6-ի (Պարտավորվածություններ) և կետ 7-ի (Տեղեկատվությանը վերաբերող

պարտավորություններ) համաձայն իրեն տրված պարտավորություններից որևէ մեկը՝ առանց բացառության:

4.4 Անօրինականություն

Ֆինանսական փաստաթղթերի համաձայնագրի շրջանակներում իր պարտավորություններից որևէ մեկի կատարումը Շահառուի համար անօրինական է կամ դարձել է անօրինական:

Իր կիրառելի օրենքի համաձայն՝ Գործակալության համար Համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից ցանկացածի կատարումը կամ ֆինանսավորելը կամ Դրամաշնորհը պահպանելը դարձել է անօրինական:

4.5 Էական բացասական փոփոխություն

Տեղի է ունեցել կամ կարող է տեղի ունենալ որևէ իրադարձություն (ներառյալ՝ Շահառուի երկրի քաղաքական իրավիճակի փոփոխություն) կամ որևէ միջոցառում, որը հավանական է, որ, ըստ Գործակալության, կարող է ունենալ էական բացասական ազդեցություն:

4.6 Ծրագրի հետկանչ կամ կասեցում

Տեղի է ունեցել հետևյալներից որևէ մեկը.

- Ծրագրի իրականացումը կասեցվել կամ հետաձգվել է վեց (6) ամսից ավելի ժամկետով, կամ
- Ծրագիրն ամբողջապես չի ավարտվել մինչ Տեխնիկական ավարտի օրը, կամ
- Վերջնական շահառուն դուրս է գալիս Ծրագրից կամ դադարում է մասնակցություն ունենալ Ծրագրին:

4.7 Լիազորություններ

Սույն Համաձայնագրի շրջանակներում իր պարտականությունները կամ որևէ Ծրագրի փաստաթղթերի ներքո իր այլ էական պարտականությունները կատարելու կամ դրանց հետևելու համար Վերջնական շահառուի համար ցանկացած պահանջվող լիազորություն կամ Ծրագրի սովորական ընթացքում պահանջվող լիազորություն, որ ձեռք չի բերվում պահանջվող ժամանակահատվածում կամ չեղարկվում կամ դառնում է անօրինական կամ այլևս դադարում է լինել լիարժեք ուժի մեջ:

4.8 Ազատ փոխարկելիության և անվճար փոխանցման կասեցում

Շահառուի կողմից Դրամաշնորհի առնչությամբ ստացված գումարների ազատ փոխարկումը և/կամ անվճար փոխանցումը կամ Գործակալության կողմից Շահառուին կամ Ծրագրի իրավասության շրջանակներում որևէ շահառուի տրամադրված ցանկացած այլ ֆինանսական միջոց վիճարկվում է:

4.9. Վարկային համաձայնագրի առնչությամբ Շահառուի կողմից դեֆոլտ

Շահառուն դեֆոլտի մեջ է գտնվում Գործակալության հետ կնքած վարկային համաձայնագրի առնչությամբ:

4.10. Վերջնական շահառուի կողմից դեֆոլտ

Վերջնական շահառուն՝ i) չի կատարում Ենթադրամաշնորհային համաձայնագրի որևէ պայման, ii) չի կատարում Ծրագրի առնչությամբ կնքված Ծրագրի փաստաթղթի կամ որևէ այլ համաձայնագրի կամ ակտի որևէ պայման կամ iii) վերջնաժամկետի օրվա դրությամբ չի վճարել Ծրագրի առնչությամբ վճարման ենթակա որևէ գումար:

4.11. Միջամտություն լիազոր մարմնի կողմից

Լիազոր մարմինը՝

- որոշում է փակել, բռնագանձել կամ բռնագրավել Ծրագրի բոլոր կամ որոշ միջոցները կամ Վերջնական շահառուի ակտիվներից մեկը կամ մի քանիսը, որոնք պետք է շարունակեն իրենց գործողությունը, կամ

- տիրապետում է Ծրագրի բոլոր միջոցներին կամ դրանց մի մասին կամ Վերջնական շահառուի ակտիվներից որևէ մեկին, որոնք պետք է շարունակեն իրենց գործողությունը, կամ վերահսկում է դրանք, կամ

- միջոցներ է ձեռնարկում Վերջնական շահառուի լուծարման, անջատման, կառավարման, վերակազմակերպման կամ վերակառուցման նպատակով,

- ձեռնարկում է որևէ այլ միջոց, որը կխոչընդոտի Վերջնական շահառուին շարունակել իր բոլոր գործողությունները և գործունեությունը կամ դրանց մի մասը:

5. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

Կետ 5-ում (Ներկայացուցչություններ և երաշխիքներ) նշված բոլոր ներկայացուցչությունները և երաշխիքները կատարվում են ուժի մեջ մտնելու ամսաթվին, Շահառուի կողմից՝ ի շահ Գործակալության: Կետ 5-ում (Ներկայացուցչություններ և երաշխիքներ) բոլոր ներկայացուցչությունները և երաշխիքները կատարվում են Շահառուի կողմից՝ յուրաքանչյուր Մասհանման ամսաթվին:

5.1 Իրավասություն և լիազորություն

Շահառուն ունի իրավասություն կնքելու, կատարելու և հանձնելու սույն Համաձայնագիրն ու Ծրագրի փաստաթղթերը և կատարելու դրանցից բխող պարտավորությունները: Շահառուն ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ լիազորելու սույն Համաձայնագրի և Ծրագրի փաստաթղթերի իր կողմից կնքումը, իրականացումն ու հանձնումը և դրամաշնորհով ֆինանսավորվող գործողությունները:

5.2 Պարտադիր պարտավորություններ

Սահմանված պարտավորությունները՝ հանձն առնված Շահառուի կողմից՝ սույն Համաձայնագրի շրջանակներում, համապատասխանում են Շահառուի համար կիրառելի՝ իր երկրի օրենքներին ու կանոնակարգերին և իրավական, վավեր, պարտադիր և հարկադրելի պարտավորություններ են, որոնք ուժի մեջ են իրենց գրավոր պայմաններին համապատասխան:

5.3 Հակասության բացակայություն այլ պարտավորությունների հետ

Շահառուի կողմից սույն Համաձայնագրի կնքումն ու իրականացումը և դրանից բխող պարտավորությունների կատարումը չի հակասում Շահառուի համար որևէ կիրառելի՝ ներպետական կամ օտարերկրյա օրենքի կամ կանոնակարգի կամ Շահառուի համար պարտադիր կամ նրա որևէ ակտիվի վրա ազդող որևէ համաձայնագրի կամ փաստթղթի:

5.4 Ապացույցի վավեր և ընդունելի լինելը

Բոլոր այն լիազորությունները, որոնք անհրաժեշտ են՝

ա) հնարավորություն տալու համար Շահառուին կնքելու սույն Համաձայնագիրը և օգտվելու իր իրավունքներից և հետևելու սույն Համաձայնագրի և Ծրագրի փաստաթղթերով իրեն տրված պարտավորություններին, և

բ) սույն Համաձայնագիրը և Ծրագրի փաստաթղթերը դարձնելու ընդունելի ապացույց Շահառուի իրավասության դատարաններում,

ստացվել են, ամբողջությամբ ուժի մեջ են և գործում են, և ոչ մի հանգամանք առկա չէ, որը կարող է հանգեցնել որևէ նման լիազորության մասամբ կամ ամբողջությամբ հետ կանչման, թարմացման կամ ձևափոխման:

5.5 Ծրագրի թույլտվություններ

Ծրագրի բոլոր թույլտվությունները ստացվել են կամ իրականացվել են և ամբողջությամբ ուժի մեջ են և գործում են, և ոչ մի հանգամանք առկա չէ, որը կարող է հանգեցնել, որ Ծրագրի որևէ լիազորություն մասամբ կամ ամբողջությամբ հետ կանչվի, չեղյալ համարվի, չվերականգնվի կամ չձևափոխվի:

5.6 Գնումներ

Շահառուն՝ i) ստացել է Գնման ուղեցույցների կնկնօրինակը և ii) հասկանում է Գնման ուղեցույցների պայմանները, մասնավորապես՝ այն պայմանները, որոնք վերաբերում են ցանկացած գործողության, որը կարող է ձեռնարկել Գործակալությունը Շահառուի կողմից Գնման ուղեցույցների խախտման պարագայում, և iii) տրամադրել է Գնման ուղեցույցների կնկնօրինակը Վերջնական շահառուին, ով հաստատել է, որ ինքը հասկանում է Գնման ուղեցույցների պայմանները և, մասնավորապես, այն պայմանները, որոնք վերաբերում են ցանկացած գործողության, որը կարող է ձեռնարկել Գործակալությունը Վերջնական Շահառուի կողմից Գնման ուղեցույցների խախտման պարագայում:

Շահառուն պայմանագրով կապակցված է Գնման ուղեցույցներին, կարծես թե Գնման ուղեցույցները հղմամբ ներառված են սույն Համաձայնագրում:

5.7 Միջոցների ծագումը, կոռուպցիոն գործողություններ, խարդախություն և հակամրցակցային գործելակերպ

Շահառուն ներկայացնում և հավաստում է, որ Ծրագիրը (մասնավորապես՝ Դրամաշնորհով ֆինանսավորվող որևէ պայմանագրի բանակցությունը, կնքումը և կատարումը) չի հանգեցնի Կաշառակերության որևէ ակտի, խարդախության կամ հակամրցակցային գործելակերպի:

6. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կետ 6-ով ստանձնած պարտավորություններն ուժի մեջ են մտնում Ուժի մեջ մտնելու ամսաթվից և մնում են ուժի մեջ սույն Համաձայնագրի ընթացքում:

6.1 Լիազորություններ

Շահառուն պետք է անմիջապես ստանա, համապատասխանի և անի անհրաժեշտ ամեն բան ուժի մեջ պահելու համար և ապահովի, որ Վերջնական շահառուն անմիջապես ստանա, համապատասխանի և անի անհրաժեշտ ամեն բան, որպեսզի կիրառվող օրենքով կամ կանոնակարգերով պահանջվող ցանկացած Լիազորություն մնա ուժի մեջ՝ Ֆինանսավորման փաստաթղթերի շրջանակներում իր պարտավորությունները կատարելու և որևէ ֆինանսավորման փաստաթղթի կամ որևէ Ծրագրի փաստաթղթի օրինականությունը, վավերությունը, կիրարկելիությունը և թույլատրելիությունն ապահովելու համար:

6.2 Ծրագրի փաստաթղթեր

Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն Գործակալությանը ներկայացնի Ծրագրի որևէ փաստաթղթում արված որևէ փոփոխության օրինակ և չպետք է Ծրագրի որևէ փաստաթղթում կատարի որևէ էական փոփոխություն և համաձայնի դրան՝ առանց ձեռք բերելու Գործակալության նախնական համաձայնությունը:

6.3 Համապատասխանություն օրենքներին և կանոնակարգերին

Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն հետևի.

ա) Բոլոր առումներով՝ բոլոր օրենքներին և կանոնակարգերին, որոնց ինքը և/կամ Ծրագիրը ենթակա է, մասնավորապես՝ հարկային թափանցիկությունը խրախուսող տեղեկատվության հրապարակման, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության, անվտանգության և աշխատանքային օրենքների վերաբերյալ, ներառյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիաները և Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ միջազգային բնապահպանական կոնվենցիաները, որոնք չեն հակասում համապատասխան երկրի գործող օրենքին,

բ) Ծրագրի փաստաթղթերի շրջանակներում իր բոլոր պարտավորություններին:

6.4 Գնումներ

Գնման, պարգևի և Ծրագրի իրականացմանն առնչվող՝ կնքված պայմանագրերի կատարման մասով շահառուն պարտավորվում է հետևել Գնումների ուղեցույցների դրույթներին և դրանք իրականացնել: Շահառուն երաշխավորում է, որ Վերջնական շահառուն հետևի և իրականացնի Գնման ուղեցույցները:

Շահառուն ձեռնարկում է բոլոր միջոցներն ու քայլերը, որոնք անհրաժեշտ են Գնումների ուղեցույցների արդյունավետ իրականացման համար:

Գնումների ուղեցույցներում, չնայած հակառակին, Շահառուն պետք է դիմի էքսպերթայզ Ֆրանսիային՝ տրամադրել պետության, տարածքային մարմինների, Ֆրանսիայի պետական կառավարման և հիվանդանոցային ծառայությունների համար աշխատող տեխնիկական աջակցության փորձագետներ և քաղաքացիական ծառայողներ՝ այնքանով, որքանով երկարաժամկետ տեխնիկական աջակցություն է տրամադրվում Ծրագրի համար:

6.5 Լրացուցիչ ֆինանսավորում

Շահառուն չպետք է ուղղի կամ փոփոխի Ֆինանսավորման պլանը՝ առանց Գործակալության նախնական գրավոր համաձայնությունը ձեռք բերելու, և պետք է ֆինանսավորի Ֆինանսավորման պլանում չնախատեսված ցանկացած հավելյալ ծախս՝ Գործակալությանն ընդունելի պայմաններով:

6.6 Ծրագրի իրականացումը

Շահառուն պարտավորվում է.

(i) ապահովել, որ Ծրագրի իրականացմանը մասնակցող անձինք, խմբերը կամ կազմակերպություններն ընդգրկված չլինեն Ֆինանսական պատժամիջոցների որևէ ցուցակում (ներառյալ նրանք, որոնք առնչվում են ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին).

(ii) չգնել, չմատակարարել, ֆինանսավորել ցանկացած պարագա, ծառայություն կամ ոլորտ, որն արգելված է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից:

6.7 Միջոցների ծագումը, կոռուպցիոն գործողությունների, խարդախության կամ հակամրցակցային գործելակերպի բացառում:

Շահառուն պարտավորվում է.

(i) ապահովել, որ Ծրագիրը (մասնավորապես՝ Դրամաշնորհով ֆինանսավորվող պայմանագրերի բանակցման, ուժի մեջ մտնելու և կատարման ընթացքում) չհանգեցնի կոռուպցիոն որև գործողության, խարդախության կամ հակամրցակցային գործելակերպ,

(ii) անհապաղ տեղեկացնել Գործակալությանը, հենց որ իրեն հայտնի է դառնում կամ ինքը կասկածում է կոռուպցիոն որևէ գործողության, խարդախության կամ հակամրցակցային գործելակերպի մասին,

(iii) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մեղմելու համար իրավիճակը Գործակալությանն ընդունելի ձևով և Գործակալության կողմից սահմանված ժամանակահատվածում, կետ ii-ի դեպքում կամ Գործակալության դիմումի դեպքում, եթե Գործակալությունը կասկածում է, որ կետ ii-ում նշված գործողություններն ու գործելակերպն առաջացել են, և

(iv) անհապաղ ծանուցել Գործակալությանը, եթե ինքը տիրապետում է տեղեկատվության, որը կասկած է հարուցում Ծրագրում ներդրված ֆինանսական միջոցների անօրինական ծագման առնչությամբ:

6.8 Բնապահպանական և սոցիալական պարտավորություն

6.8.1 Բնապահպանական և սոցիալական միջոցառումների կազմակերպում

Կայուն զարգացմանը նպաստելու նպատակով Կողմերը համաձայնում են, որ անհրաժեշտ է հետևել միջազգայնորեն ճանաչված՝ բնապահպանական և աշխատանքային չափորոշիչներին, ներառյալ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հիմնարար կոնվենցիաներին և համապատասխան միջազգային բնապահպանական պայմանագրերին:

Նման նպատակի համար Շահառուն պետք է ապահովի, որ Վերջնական շահառուն, համապատասխանելով Ծրագրի համատեքստին՝

ա) մրցութային մասնագրերում և գնումների պայմանագրերում ներառի դրույթ, որով յուրաքանչյուր կապալառու կպարտավորվի և կապահովի, որ իր ենթակապալառուները (առկայության դեպքում) պարտավորվեն հետևել այդ միջազգային չափորոշիչներին՝ այն երկրի կիրառելի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, որտեղ Ծրագիրն իրականացվում է:

բ) պահանջի, որ Ծրագրի իրականացման համար նշանակված կապալառուները կիրառեն անհրաժեշտ բոլոր մեղմացուցիչ միջոցները և ապահովեն, որ իրենց ենթակապալառուները (առկայության դեպքում) կիրառեն բոլոր նման միջոցները և ձեռնարկեն բոլոր համապատասխան քայլերը բոլոր նման միջոցառումների կազմակերպելը ձախողելու դեպքում:

6.8.2 Բնապահպանական և սոցիալական բողոքների կառավարում

ա) Շահառուն՝ i) հաստատում է, որ ինքն ստացել է ES բողոքների կառավարման ընթացակարգերի օրինակը և ընդունել է դրա պայմանները, մասնավորապես՝ Գործակալության կողմից ձեռնարկված հնարավոր գործողությունների առնչությամբ, այն դեպքում, երբ երրորդ կողմը բողոք է ներկայացնում, և ii) ընդունում է, որ ES բողոքների կառավարման ընթացակարգերը՝ Շահառուի և Գործակալության միջև, ունեն նույն պայմանագրային ուժը, ինչ սույն Համաձայնագիրը:

բ) Շահառուն Գործակալությանը հստակորեն լիազորում է փորձագետներին (ինչպես սահմանված է ES բողոքների կառավարման ընթացակարգերում) և աուդիտի և/կամ վեճերի լուծման ընթացակարգում ներգրավված կողմերին տրամադրել բնապահպանական և սոցիալական հարցերին առնչվող Ծրագրի փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են բնապահպանական և սոցիալական բողոքները քննելիս (ինչպես սահմանված է ES բողոքների կառավարման ընթացակարգերում), ներառյալ՝ առանց սահմանափակման, Հավելված 7-ում թվարկվածներին *(Բնապահպանական և սոցիալական փաստաթղթերի ոչ սպառիչ ցանկը՝ ES բողոքների կառավարման ընթացակարգերի առնչությամբ, որոնք շահառուն թույլատրում է հրապարակել)*:

6.9 Ծրագրի հաշիվներ

Շահառուն պետք է ապահովի, որ Վերջնական շահառուն բացի, պահպանի և օգտագործի Ծրագրի հաշիվը՝ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

6.10 Ենթադրամաշնորհ - Վերջնական շահառուի մոնիտորինգ

Շահառուն պետք է.

ա) ներառի Ենթադրամաշնորհային համաձայնագրում դրույթներ, որոնցով Վերջնական շահառուն պարտավորվում է կատարել բոլոր այն պարտավորվածությունները, որ Շահառուն տվել է Վերջնական շահառուի անունից՝ սույն Համաձայնագրի ներքո, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ կետ 6-ում (Պարտավորվածություններ) և կետ 7-ում (Տեղեկատվական պարտավորվածություններ) սահմանված պարտավորվածություններով, ինչպես նաև Վերջնական շահառուին տրված լիազորությունը՝ գործելու հանուն Շահառուի և Շահառուի անունից հատկապես Մասհանման հայտերի առնչությամբ.

բ) պարբերաբար հավաքագրի և տրամադրի Գործակալությանը ենթադրամաշնորհային միջոցներից օգտվող ցանկացած ֆիզիկական անձի (ինքնություն, քաղաքացիություն, բնակության հասցե) և/կամ ցանկացած իրավաբանական անձի (կազմակերպության

անվանումը, գրանցման վայրը, գրանցված գրասենյակը, բաժնետերերի ինքնությունը) անձնական տվյալները.

գ) Գործակալությանը տրամադրի Ենթադրամաշնորհային համաձայնագրի առնչությամբ ցանկացած տեղեկատվություն, որը պետք է գրանցվի Վերջնական շահառուի հաշվապահական գրքերում.

դ) ապահովի, որ Վերջնական շահառուն իրականացնի Ենթադրամաշնորհային համաձայնագրի ներքո իր պարտականությունները, և որ Վերջնական շահառուի կողմից ենթադրամաշնորհային միջոցներն օգտագործվեն Ծրագրի ֆինանսավորման համար՝ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

6.11 Էքսպերթայզ Ֆրանսիայի կարգավիճակը

Շահառուն պարտավորվում է ավելի քան վեց ամիս տևողությամբ առաքելության համար նշանակված Էքսպերթայզ Ֆրանսիայի տեխնիկական փորձագետներին դասակարգել Ֆրանսիայի համագործակցության գործակալության կատեգորիայում, մասնավորապես՝ հարկային և մաքսային նպատակներից ելնելով: Այդ նպատակով Շահառուն պարտավորվում է կիրառել Էքսպերթայզ Ֆրանսիայի հետ կնքված համագործակցության համաձայնագրով սահմանված ընթացակարգը և/կամ պահանջվող տեղական ընթացակարգը, հնարավոր դեպքի պարագայում, Էքսպերթայզ Ֆրանսիայի տեխնիկական փորձագետներին իրենց ծառայությունների ամբողջ ժամկետի համար՝ Ծրագրի շրջանակներում և դրա նպատակների համար նմանատիպ կարգավիճակ շնորհելու համար:

6.12 Ծրագրի պահպանում

Շահառուն հրահանգում է Վերջնական շահառուին.

ա) իրականացնել և պահպանել Ծրագիրը՝ առևտրային գործելակերպի ընդունված ընդհանուր սկզբունքներին և գործող տեխնիկական չափորոշիչներին համապատասխան,

բ) պահպանել Ծրագրի բոլոր ակտիվները լավ աշխատանքային վիճակում և պայմաններում՝ կիրառելի բոլոր օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, և օգտագործել նման ակտիվներն իրենց համապատասխան նպատակների համար և կիրառելի բոլոր օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան:

6.13 Ստուգումներ

Շահառուն թույլ է տալիս Գործակալությանը և իր ներկայացուցիչներին կատարել ստուգումներ Ծրագրի իրականացման և գործողությունների, ֆինանսական ասպեկտների, Ծրագրի նպատակների ազդեցության և ձեռքբերումների առնչությամբ:

Շահառուն պետք է համագործակցի Գործակալության և իր ներկայացուցիչների հետ՝ նման ստուգումներ իրականացնելու նպատակով. ստուգումների ժամկետներն ու ձևաչափը յուրաքանչյուր դեպքում որոշվելու է Գործակալության կողմից՝ խորհրդակցելով Շահառուի հետ:

Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն պահպանի և ստուգումներ իրականացնելու համար Գործակալությանը տրամադրի Ծրագրին առնչվող բոլոր փաստաթղթերը Մասհանման վերջնաժամկետից հետո տասը (10) տարի ժամկետով:

6.14 Ծրագրի գնահատում

Շահառուն ընդունում է, որ Գործակալությունը կարող է իրականացնել կամ ապահովել, որ երրորդ կողմն իր անունից իրականացնի Ծրագրի գնահատում: Այդ գնահատման արդյունքները կօգտագործվեն կատարողականի հաշվետվություն կազմելու համար, որը կպարունակի Ծրագրին առնչվող տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ ֆինանսավորման ընդհանուր գումարը և տևողությունը, Ծրագրի նպատակները, Ծրագրի կատարողականի թիրախներն ու իրական ծախսերը և Ծրագրի համապատասխանության, արդյունավետության, ազդեցության և կենսունակության/կայունության գնահատումը:

7. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն կետ 7-ի պարտավորվածությունները *(Տեղեկացման պարտավորվածություններ)* ուժի մեջ են մտնում Ուժի մեջ մտնելու օրվանից և ուժի մեջ են մնում սույն Համաձայնագրի ամբողջ ընթացքում:

7.1 Առաջընթացի հաշվետվություն

Շահառուն Գործակալությանն է տրամադրում.

ա) մինչև Տեխնիկական ավարտման ամսաթիվը՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո տասնհինգ (15) օրացուցային օրվա ընթացքում՝ տեխնիկական և ֆինանսական առաջընթացի հաշվետվություն՝ Ծրագրի իրականացման առնչությամբ, ներառյալ Ծրագրի ցուցանիշները՝ Հավելված 5-ում սահմանված ձևով *(Առաջընթացի հաշվետվության ձև).*

բ) տեխնիկական ավարտման ամսաթվից հետո՝ երեք (3) ամսվա ընթացքում, ընդհանուր կատարման հաշվետվություն (**«Ընդհանուր կատարման հաշվետվություն»**), ներառյալ Ծրագրի ցուցանիշները՝ Հավելված 5-ում սահմանված ձևով *(Առաջընթացի հաշվետվության ձև):*

7.2 Տեղեկատվություն - այլ

Շահառուն պետք է տեղեկացնի Գործակալությանը՝

ա) որևէ իրադարձության կամ հանգամանքի մանրամասների մասին, որը պատճառ է հանդիսանում կամ կարող է պատճառ հանդիսացող իրադարձություն լինել Մասհանման հայտի հետաձգման կամ չեղարկման կամ, որը ունի կամ կարող է ունենալ էական բացասական ազդեցություն, նման իրադարձության բնույթի և փոխհատուցելու համար ձեռնարկված կամ ձեռնարկվելիք բոլոր միջոցների մասին (եթե կան) անմիջապես, երբ տեղեկանա դրանց մասին,

բ) անհապաղ, ցանկացած պատահարից կամ վթարից հետո, որն ուղղակիորեն առնչվում է Ծրագրի իրականացման հետ, որը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ծրագրի միջավայրի, իր աշխատողների աշխատանքային պայմանների կամ Ծրագրի իրականացման համար աշխատող որևէ կապալառուի վրա, դրա մասին տեղեկանալուց հետո այդ պատահարի կամ վթարի բնույթի մասին, Շահառուի կողմից իրականացված կամ իրականացվելիք փոխհատուցման ցանկացած միջոցառման մանրամասների հետ միասին,

գ) անհապաղ, ցանկացած որոշման կամ իրադարձության մասին, որը կարող է ազդել Ծրագրի կազմակերպման, ավարտման կամ գործարկման վրա,

դ) ծրագրի իրականացման ողջ ընթացքում ցանկացած ծառայություն մատուցողի և/կամ Կապալառուի կողմից պատրաստված՝ միջանկյալ և վերջնական հաշվետվությունները, և որից հետո կատարման համապարփակ հաշվետվություն,
անհապաղ, միջոցների օգտագործմանն ու Ծրագրի փաստաթղթերի իրականացման պայմաններին վերաբերվող որևէ հետագա տեղեկատվության կամ փաստաթղթի մասին, ինչպես նաև դրանց իրականացման համար կնքված պայմանագրերի, որոնք Գործակալությունը կարող է հիմնավոր կերպով պահանջել:

7.3 Վերջնական շահառուի վերաբերյալ տեղեկատվություն

Ծրագրի իրականացման և գործողության ընթացքում Շահառուն ապահովում է, որ Վերջնական շահառուն.

(i) տրամադրի Գործակալությանը իր տարեկան ֆինանսական կամ բյուջետային փաստաթղթերը՝ դրանց հաստատումից հետո, ինչպես նաև բոլոր մանրամասները, որոնք Գործակալությունը, իր ֆինանսական վիճակի հետ կապված, կարող է ողջամտորեն պահանջել.

(ii) ուղարկի Գործակալությանը՝ դիմումի համաձայն, հանդիպումների, որոշումների և իր կառավարման մարմինների զեկույցների արձանագրություններն աուդիտ արված իր տարեկան ֆինանսական հաշվետվությունների կամ, կախված հանգամանքներից, իր ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված ցանկացած հաշվետվության հետ միասին:

8. ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾԱԽՔԵՐ – ԳՐԱՆՑՈՒՄ

Շահառուն պետք է վճարի սույն Համաձայնագրի բանակցություններին, նախապատրաստմանը և ստորագրմանն առնչվող բոլոր ծախսերն ու ծախքերը, ներառյալ՝ կախված հանգամանքներից՝

(i) իրավաբանի վճարները՝ 3000 եվրոն չանցնող,

(ii) գրանցման ծախսերը, եթե գրանցումը պահանջվում է Կողմերից մեկի կողմից, և սույն Համաձայնագրի առնչությամբ վճարվելիք այլ նմանատիպ հարկերը, և

(iii) ծախսերը և ծախքերը՝ Փարիզի ֆինանսական կենտրոնից որևէ այլ ֆինանսական կենտրոն միջոցների՝ Գործակալության հետ համաձայնեցված տեղափոխման առնչությամբ:

9. ՏԱՐԲԵՐ ՀԱՐՑԵՐ

9.1 Լեզու

Սույն Համաձայնագրի լեզուն անգլերենն է: Եթե սույն Համաձայնագիրը թարգմանվում է, սույն Համաձայնագրի պայմանների ցանկացած հակասական մեկնաբանության կամ Կողմերի միջև վեճերի դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Սույն Համաձայնագրի շրջանակներում կամ դրա առնչությամբ ողջ հաղորդակցությունը կամ փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն:

Գործակալությունը կարող է պահանջել, որ սույն Համաձայնագրի շրջանակներում կամ դրա առնչությամբ որևէ հաղորդակցության կամ փաստաթղթի դեպքում, որն անգլերեն չէ, ներկայացվի անգլերենի վավերացված թարգմանություն, որի դեպքում գերակայում է անգլերեն թարգմանությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փաստաթուղթը իրավական տեքստ է կամ մեկ այլ պաշտոնական փաստաթուղթ:

9.2 Մասնակի ոչ վավեր լինելը

Եթե որևէ պահի սույն Համաձայնագրի որևէ դրույթ անօրինական, անվավեր կամ ուժը կորցրած է կամ դառնում է այդպիսին, դա չի ազդում սույն Համաձայնագրի մյուս դրույթների՝ վավեր, օրինական կամ ուժի մեջ լինելու վրա:

9.3. Իրավունքներից հրաժարվելու բացառում

Եթե Գործակալությունը չի օգտվում իր որևէ իրավունքից կամ հետաձգում է դրանից օգտվելը, դա չպետք է համարել իր իրավունքներից հրաժարում:

Իրավունքից մասամբ օգտվելը չի համարվում խոչընդոտ նման իրավունքից ավելի ուշ օգտվելու կամ որևէ այլ իրավունքից կամ դատական պաշտպանության միջոցից կիրառելի օրենքով օգտվելու համար:

Սույն Համաձայնագրի ներքո՝ Գործակալության իրավունքները և դատական պաշտպանության միջոցները հավաքական են և չեն բացառում որևէ կիրառելի օրենքով նախատեսված որևէ իրավունք կամ պահանջ:

9.4 Հանձնարարում

Շահառուն, առանց Գործակալության նախնական գրավոր համաձայնության, չի կարող որևէ կերպ հանձնարարել կամ փոխանցել սույն Համաձայնագրով իր բոլոր իրավունքները և պարտականությունները կամ որևէ իրավունք և պարտականություն:

9.5 Իրավական ուժ

Սույն Համաձայնագրին կից Հավելվածները, Գնման ուղեցույցները և դեկլարատիվները կազմում են սույն Համաձայնագրի մաս և ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ որ սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

9.6 Ամբողջ համաձայնագիրը

Ուժի մեջ մտնելու ամսաթվից սույն Համաձայնագիրը ներկայացնում է Կողմերի միջև ամբողջ համաձայնագիրը՝ դրանում նշված առարկաների առնչությամբ, և այն դուրս է մղում և փոխարինում բոլոր նախկին փաստաթղթերը, համաձայնագրերը կամ պայմանավորվածությունները, որոնք կարող էին փոխանակված կամ հաղորդված լինել՝ որպես բանակցման մաս, սույն Համաձայնագրի առնչությամբ:

9.7 Փոփոխություններ

Ոչ մի փոփոխություն չի կարող կատարվել սույն Համաձայնագրում, քանի դեռ այդ փոփոխությունը հստակորեն գրավոր ձևով չի համաձայնեցվել Կողմերի միջև:

9.8 Գաղտնիություն – Տեղեկատվության հրապարակում

ա) Շահառուն չպետք է հրապարակի սույն Համաձայնագրի բովանդակությունը որևէ երրորդ կողմի համար՝ առանց Գործակալության նախնական համաձայնության, բացառությամբ՝ i) որևէ անձի, որի նկատմամբ Շահառուն ունի տեղեկատվությունը հրապարակելու պարտավորություն՝ որևէ կիրառելի օրենքի, կանոնակարգի կամ դատական որոշման շրջանակներում, կամ ii) Վերջնական շահառուի՝ Ծրագրի նպատակի համար:

բ) Անկախ գաղտնիության մասին որևէ գործող համաձայնագրից՝ Գործակալությունը կարող է հաղորդել Ծրագրին առնչվող որևէ տեղեկություն կամ փաստաթուղթ՝ i) իր աուդիտորներին, փորձագետներին, վարկանշային ընկերություններին, իրավական խորհրդատուներին կամ վերահսկող մարմիններին, և ii) ցանկացած անձի կամ կազմակերպության՝ սույն Համաձայնագրով որևէ պաշտպանական միջոց ձեռնարկելու կամ Գործակալության իրավունքները պաշտպանելու նպատակով:

գ) Բացի այդ՝ Շահառուն այսպիսով հստակորեն լիազորում է Գործակալությանը.

(i) Ֆրանսիայի Հանրապետության հետ փոխանակել՝ Ֆրանսիայի Կառավարության ինտերնետային կայքում հրապարակման համար՝ Միջազգային օգնության թափանցիկության նախաձեռնության ցակացած հարցմանը համապատասխան և

(ii) հրապարակել Գործակալության ինտերնետային կայքում:

Ծրագրի և դրա ֆինանսավորմանն առնչվող տեղեկատվություն, ինչպես նշված է Հավելված 6-ում (Տեղեկատվություն, որը կարող է հրապարակվել Ֆրանսիայի կառավարության և Վարկատուի վեբկայքերում):

9.9 Վաղեմության կարգավիճակ

Վաղեմության կարգավիճակի ժամանակահատվածը սույն Համաձայնագրի առնչությամբ տասը (10) տարի է:

10. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

10.1 Գրավոր ծանուցումներ

Ցանկացած ծանուցում, հայտ կամ այլ հաղորդագրություն, որ պետք է տրվի սույն Համաձայնագրի ներքո կամ դրա առնչությամբ, պետք է լինի գրավոր, և եթե այլ բան նախատեսված չէ, կարող է փոխանցվել ֆաքսով կամ փոստով՝ համապատասխան Կողմի ներքոնշյալ հասցեով և համարով.

Շահառուին՝
Անուն՝ Արգամ Արամյան
Պաշտոն՝ Միջազգային համագործակցության վարչության պետ
Հեռ.՝ +374 11 800 333
Էլ. փոստ՝ argam.aramyan@minfin.am
Անուն՝ Արտակ Մարության
Պաշտոն՝ Հաշվառման և սպասարկման բաժնի պետ - Պետական պարտքի կառավարման վարչության պետի տեղակալ
Հեռ.՝ +374 11 910 420
Էլ. փոստ՝ artak.marutyan@minfin.am
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
Հասցե՝ Երևան, 0010, Մելիք-Ադամյան 1
Հեռ.՝ +374 11 800 333
Ֆաքսիմիլ՝ +374 11 800 132
Ում՝ Միջազգային համագործակցության վարչություն

Գործակալությանը՝
ՀՖԳ – Փարիզի գլխամասային գրասենյակ
Հասցե՝ 5, rue Roland Barthes – 75598 Paris Cedex 12, France
Հեռ.՝ + 33 1 53 44 31 31

Ֆաքսիմիլ՝ + 33 1 44 87 39 65
Ում՝ ԶՖԳ Ասիայի տարածաշրջանային վարչության տնօրեն
Պատճենը՝
ԶՖԳ – ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
Հասցե՝ 34 avenue Chavchavadze – BC "Pixel" – Fl. 8th – 1079 Tbilisi - Georgia
Հեռ.՝ + 995 557 709 108
Ում՝ ԶՖԳ Հարավային Կովկասի հարցերով տարածաշրջանային գրասենյակի ղեկավարին
Կամ մեկ այլ հասցեով, ֆաքսի համարով, վարչությանը կամ պատասխանատու անձին, որի մասին մի Կողմը կտեղեկացնի մյուս Կողմին՝ առնվազն հինգ (5) աշխատանքային օր առաջ նախապես ծանուցելով:

10.2 Ստանալը

Սույն Համաձայնագրի առնչությամբ մի Կողմից մյուս Կողմին արված ցանկացած ծանուցում, հարցում կամ հաղորդագրությունկամ որևէ ուղարկված փաստաթուղթ համարվում է ստացված հետևյալ պայմանով.

(i) ֆաքսի դեպքում՝ եթե ստացվել է ընթեռնելի ձևով, և
(ii) փոստով՝ եթե ներկայացվում է ճշգրիտ հասցեով,

և որտեղ նշված է կոնկրետ անձը կամ վարչությունը, եթե նման ծանուցումը, հարցումը կամ հաղորդագրությունը հասցեագրվել է համապատասխան անձնավորությանը կամ վարչությանը:

10.3 Էլեկտրոնային հաղորդակցություն

ա) Սույն Համաձայնագրի շրջանակներում կամ դրա առնչությամբ մի անձի կողմից մյուսին ուղղված ցանկացած հաղորդակցություն կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ այլ էլեկտրոնային ձևով, եթե Կողմերը.

(i) համաձայն են, որ քանի դեռ և մինչև հակառակի մասին չի ծանուցվել, դա հաղորդակցության ընդունված ձև է լինելու,
(ii) միմյանց գրավոր տրամադրել են իրենց էլեկտրոնային հասցեները և/կամ որևէ այլ կոնտակտային տեղեկություն, որն անհրաժեշտ է այդ միջոցով տեղեկատվություն ուղարկելու և ստանալու համար, և
(iii) ծանուցում են միմյանց իրենց հասցեների կամ իրենց տրամադրած ցանկացած այլ կոնտակտային տվյալում ցանկացած փոփոխության մասին:

բ) Կողմերի միջև ցանկացած էլեկտրոնային հաղորդում ուժի մեջ է միայն այն դեպքում, երբ իրականում ստացվել է ընթեռնելի ձևով:

11. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

11.1 Ուժի մեջ մտնելը և տևողություն

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից Գործակալությանը հասցեագրված գրավոր ծանուցման ամսաթվին՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերի ավարտից հետո (Ուժի մեջ մտնելու ամսաթիվ), և ուժի մեջ կմնա մինչ սույն Համաձայնագրի կետ 3.2-ում նշված՝ «Վերջնական աուդիտի հաշվետվություն» ամսաթվից սկսած՝ երկու (2) տարի ժամկետի ավարտի ամսաթիվը:

Չնայած վերը նշվածին՝ կետ 6.13-ի (Ստուգումներ) և կետ 9.8-ի (Գաղտնիություն-Տեղեկատվության հրապարակում) պահանջներն ուժի մեջ կմնան հինգ (5) տարի՝ վերոնշյալ կետում նշված ամսաթվից սկսած:

Կետ 6.8.2-ի դրույթները (Բնապահպանական և սոցիալական բողոքների կառավարում) շարունակում են մնալ ուժի մեջ, քանի դեռ ES բողոքների կառավարման ընթացակարգերի ներքո ներկայացված որևէ բողոք ընթացքի մեջ է կամ ենթարկվում է մոնիտորինգի:

11.2 Դադարեցում

Գործակալությունն իրեն իրավունք է վերապահում դադարեցնելու սույն Համաձայնագրի գործողությունը, եթե Մասհանումը չի կատարվել Դրամաշնորհի հաստատման ամսաթվից տասնութ (18) ամսվա ընթացքում, դեկլարատիվների կետ գ-ի համաձայն:

Բացի դրանից՝ Գործակալությունն իրավունք է վերապահում իրեն դադարեցնելու սույն Համաձայնագրի գործողությունը, եթե տեղի է ունեցել կետ 4-ում (Մասհանման հայտերի հետաձգում կամ մերժում) նշված դեպքերից որևէ մեկը:

Գործակալությունը տեղեկացնում է Շահառուին նման դադարեցման մասին պատվիրված նամակով: Գործակալության պահանջի դեպքում և այս դեպքերից որևէ մեկի առկայության պատճառով Շահառուն վերադարձնում է Դրամաշնորհի միջոցները ամբողջությամբ կամ մասամբ:

12. ՂԵԿԱՎԱՐՈՂ ՕՐԵՆՔ, ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

12.1 Ղեկավարող օրենք

Սույն Համաձայնագիրը ղեկավարվում է Ֆրանսիայի օրենքներով:

12.2 Ընդդատություն

Սույն Համաձայնագրից բխող կամ դրա առնչությամբ ծագած ցանկացած վեճ լուծվում է Փարիզի դատարաններում:

12.3 Իրավաբանական հասցեի ընտրություն

Առանց հակասելու որևէ կիրառվող օրենքի՝ վերոնշյալ ցանկացած գործողությունից կամ ընթացակարգից որևէ մեկի հետ առնչվող դատական և արտադատական փաստաթղթերի սպասարկման նպատակով Շահառուն սույն Համաձայնագրի օրվա դրությամբ վերջնական որպես իր իրավաբանական հասցե է ընտրում կետ 10-ում (Ծանուցումներ) նշված հասցեն, իսկ Գործակալությունը որպես իր իրավաբանական հասցե է ընտրում կետ 10-ում (Ծանուցումներ) նշված «ՀՖԳ գլխամասային գրասենյակ» հասցեն:

Կատարված է երկու բնօրինակով, Երևանում, մարտի 30-ին, 2018 թ.

ՇԱՀԱՌՈՒ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ի դեմս՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
Անուն՝ պրն ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄՅԱՆ
Պաշտոն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ՝

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

_____

Ի դեմս՝
Անուն՝ տիկին Գայել Ասայագ
Պաշտոն՝ Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար

Համաստորագրող՝ պրն ԺԱՆ-ԲԱՏԻՍՏ ԼԸՄՈՒԱՆ՝ Ֆրանսիայի Հանրապետության՝ Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության պետքարտուղար

_____

Հավելված 1Ա. Սահմանումներ

Ընդունելի բանկ	նշանակում է՝ Գործակալության համար ընդունելի ցանկացած բանկ:
Հաշվի բանկ	նշանակում է՝ այն բանկը, որտեղ Շահառուն ապահովելու է, որպեսզի Վերջնական շահառուն բացի և պահի Ծրագրի հաշիվը, ինչպես նշված է 3.2.1. ա կետում (Ծրագրի անունով հաշվի բացումը):
Կոռուպցիոն գործողություն	նշանակում է հետևյալներից որևէ մեկը. ա) պետական պաշտոնյայի կամ որևէ անձի, ով որևէ լիազորության շրջանակում ուղղորդում կամ աշխատում է մասնավոր հատվածի կազմակերպության համար, ցանկացած բնույթի ոչ պատեհ առավելություն ուղղակի կամ անուղղակի կերպով խոստանալու, առաջարկելու կամ տալու ակտը հենց համապատասխան անձի կամ մեկ այլ անձի կամ մարմնի համար այն նպատակով, որ սույն անձը կատարի կամ հետ կանգնի իր իրավական, պայմանագրային, կամ պաշտոնական պարտականությունների կատարումից և նրա կամ մեկ այլ անձի կամ մարմնի սեփական գործողությունների վրա ազդելու ակտը, կամ բ) պետական պաշտոնյայի կամ որևէ անձի, ով որևէ լիազորության շրջանակում ուղղորդում կամ աշխատում է մասնավոր հատվածի կազմակերպության համար, ուղղակի կամ անուղղակի կերպով ցանկացած բնույթի որևէ ոչ պատեհ առավելություն խնդրելու կամ ստանալու ակտը հենց համապատասխան անձի կամ մեկ այլ անձի կամ մարմնի համար այն նպատակով, որ տվյալ անձը կատարի կամ հետ կանգնի իր իրավական, պայմանագրային կամ պաշտոնական պարտականությունների կատարումից և նրա սեփական գործողությունների կամ մեկ այլ անձի կամ մարմնի սեփական գործողությունների վրա ազդելու ակտը:
Կանխավճար	ունի կետ 3.2-ում (Վճարման մեխանիզմներ) սույն եզրույթին տրված նշանակությունը:
Համաձայնագիր	նշանակում է՝ սույն ֆինանսավորման համաձայնագիրը, ներառյալ դեկլարատիվները, կետերը, հավելվածները, Գնման ուղեցույցները և, ըստ անհրաժեշտության, ցանկացած՝ գրավոր կատարված փոփոխություն:

Հակամրցակցային գործելակերպ	նշանակում է՝ ա) որևէ համաձայնեցված կամ ենթադրելի գործողություն, որի նպատակն է խոչընդոտել, սահմանափակել կամ խաթարել մրցակցությունը շուկայում, կամ դրա հետևանքն է մրցակցության խոչընդոտումը, սահմանափակումը կամ խաթարումը շուկայում, ներառյալ, առանց բացառությունների, նպատակ ունենալով՝ i) սահմանափակելու մուտքը շուկա կամ ազատ մրցակցությունն այլ ընկերությունների կողմից, ii) կանխելու ազատ շուկայական գների ձևավորումը՝ արհեստականորեն նպաստելով նման գների բարձրացմանը կամ նվազեցմանը, iii) սահմանափակելու կամ վերահսկելու ցանկացած արտադրություն, շուկա, ներդրումային կամ տեխնիկական առաջընթաց, կամ iv) բաշխելու շուկաներ կամ մատակարարման աղբյուրներ, բ) ներքին շուկայում կամ դրա զգալի մասում մի ընկերության կամ մի խումբ ընկերությունների կողմից գերիշխող դիրք զբաղեցնելու ցանկացած չարաշահում, կամ գ) որևէ մրցույթի հայտ կամ «գիշատիչ գնագոյացում», որի նպատակն է և/կամ հետևանքն է վերացնել շուկայից կամ կանխել ընկերության կամ նրա արտադրանքներից մեկի մուտքը շուկա:
Լիազոր մարմին(ներ)	նշանակում է՝ ցանկացած կառավարություն կամ ցանկացած մարմին, ստորաբաժանում կամ հանձնաժողով, որն իրականացնում է պետական բացառիկ գործառույթներ, կամ որևէ վարչակազմ, դատարան, գործակալություն կամ պետական կամ որևէ կառավարական, վարչական, հարկային կամ դատական մարմին:
Լիազորություն(ներ)	նշանակում է՝ ցանկացած լիազորություն, համաձայնություն, հաստատում, որոշում, թույլտվություն, լիցենզիա, ազատում, ներկայացում, նոտարական վավերացում կամ գրանցում կամ դրանց նկատմամբ որևէ բացառություն՝ ստացված կամ տրամադրված Լիազոր մարմնի կողմից՝ անկախ նրանից՝ շնորհվել է դա սահմանված ժամկետում գործողության միջոցով, թե բացթողման արդյունքում:
Վավերացված	նշանակում է՝ ցանկացած լիազորված անձի կողմից բնօրինակ փաստաթղթի ցանկացած օրինակի, պատճենի կամ այլ կրկնօրինակի պատշաճ կերպով վավերացում՝ բնօրինակ փաստաթղթի օրինակի, պատճենի կամ կրկնօրինակի համապատասխանության նպատակներից ելնելով:

Կապալառու(ներ)	նշանակում է՝ Վերջնական շահառուի կողմից Ծրագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն իրականացնելու համար նշանակված երրորդ կողմի կապալառու (ներ), ինչպես նկարագրված է Հավելված 2-ում (Ծրագրի նկարագրություն), որը ներառում է Էքսպերտայզ Ֆրանսիան՝ Բաղադրիչ 2-ի իրականացման համար (երկարաժամկետ տեխնիկական աջակցություն):
Մասհանման վերջնաժամկետ	նշանակում է՝ 2019թ. Դեկտեմբերի 31՝ ամսաթիվ, որից հետո հետագայում որևէ մասհանում չի կարող կատարվել:
Միջոցների օգտագործման վերջնաժամկետ	նշանակում է՝ տասներկու (12) ամսվա ժամանակահատվածի ժամկետը լրանալու օրը՝ սկսած Կանխավճարի վճարման ամսաթվից:
Մասհանում	նշանակում է՝ կետ 3-ում (Միջոցների մասհանում) սահմանված պայմաններին համաձայն՝ Դրամաշնորհի առնչությամբ Գործակալության կողմից Շահառուին հասանելի դարձված միջոցների ամբողջական կամ մասնակի մասհանում:
Թույլատրելի ծախս(եր)	նշանակում է՝ Ծրագրի երկու բաղադրիչներին առնչվող ծախս(եր), ինչպես սահմանված է Հավելված 3-ում *(Ինդիկատիվ ֆինանսավորման պլան)*:
Էմբարգո	նշանակում է՝ առևտրային բնույթի որևէ պատիժ, որով նախատեսվում է արգելել տվյալ ժամանակահատվածում որևէ երկիր մուտք գործող կամ այնտեղից դուրս եկող մեկ կամ մի քանի տեսակի ապրանքների, արտադրանքների կամ ծառայությունների արտահանումը կամ ներմուծումը (ցանկացած մատակարարում, վաճառք կամ փոխանցում), ինչպես հրապարակված և փոփոխված է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից:
Եվրո	նշանակում է՝ Եվրոպական տնտեսական և դրամային միության անդամ երկրների, ներառյալ՝ Ֆրանսիայի, միակ արժույթը և այդ երկրների վճարման օրինական միջոցը:
Ուժի մեջ մտնելու օր	ունի սույն Համաձայնագրի կետ 11-ում տրված նշանակությունը (Ուժի մեջ մտնելը, տևողությունը, դադարեցումը):
Էքսպերտայզ Ֆրանսիայի	նշանակում է՝ l'Agence Française d'Expertise Technique Internationale, որը գրանցվել է 2015 թ. հունվարի 1-ին՝ Ֆրանսիայի օրենսդրության ներքո՝ որպես արդյունաբերական և առևտրային հասարակական կազմակերպություն:

Աուդիտի վերջնական հաշվետվություն	ունի կետ 3.2 (բ)-ում (Կանխավճարների օգտագործման հիմնավորում) սույն եզրույթին տրված նշանակությունը:
Վերջնական շահառու	նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, ով պատասխանատու է իր հաշվին Ծրագրի իրականացման համար՝ որպես Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող ներդրումների սեփականատեր, որոնք ենթադրամաշնորհով ստացվել են Շահառուից:
Ֆինանսական փաստաթղթեր	նշանակում է՝ սույն Համաձայնագիրը, Ենթադրամաշնորհային համաձայնագիրը և դրանց առնչությամբ ցանկացած այլ փաստաթուղթ:
Ֆինանսական պատժամիջոցների ցանկ	նշանակում է՝ հատուկ սահմանված անձանց, խմբերի կամ մարմինների ցանկ(եր), որոնք ենթակա են Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության և Ֆրանսիայի կողմից ֆինանսական պատժամիջոցների: Միայն տեղեկատվության նպատակներից ելնելով՝ և Շահառուի հարմարության համար, ով հնարավոր է, որ չհիմնվի դրանց վրա, տրամադրվում են հետևյալ հղումներն ու ինտերնետային կայքի հասցեները. **Միավորված ազգերի կազմակերպության կողմից հաստատված ցանկերի մասին** կարելի է տեղեկանալ հետևյալ ինտերնետային կայքում. https://www.un.org/sc/suborg/fr/sanctions/un-sc-consolidated-list **Եվրոպական միության կողմից հաստատված ցանկերի մասին** կարելի է տեղեկանալ հետևյալ ինտերնետային կայքում. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/8442/consolidated-list-sanctions_fr **Ֆրանսիայի կողմից հաստատված ցանկերի մասին** կարելի է տեղեկանալ հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.tresor.economie.gouv.fr/4248_Dispositif-National-de-Gel-Terroriste
Ֆինանսավորման պլան	նշանակում է՝ Ծրագրի ֆինանսավորման պլան՝ սահմանված Հավելված 3-ում (Ինդիկատիվ *Ֆինանսավորման պլան*):

Խարդախություն	նշանակում է՝ ցանկացած անարդար գործելակերպ (գործողություններ կամ բացթողումներ), որը դիտավորյալ նպատակ է հետապնդում ուրիշներին մոլորեցնելու, դիտավորյալ թաքցնելու տարրեր կամ չեղյալ հայտարարելու կամ անվավեր դարձնելու նրա համաձայնությունը, շրջանցելու ցանկացած իրավական կամ կարգավորող պահանջ և/կամ խախտելու Շահառուի կամ երրորդ կողմի ներքին կանոններն ու ընթացակարգերը՝ անօրինական օգուտ ստանալու նպատակով:
Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի նկատմամբ խարդախություն	նշանակում է՝ Եվրոպական միության բյուջեին վնաս հասցնելու նպատակով ցանկացած կանխամտածված գործողություն կամ բացթողում, ներառյալ՝ i) կեղծ, ոչ ճիշտ կամ թերի հայտարարությունների և փաստաթղթերի օգտագործումը կամ ներկայացումը, ինչը, ի վերջո, հանգեցնում է միջոցների ապօրինի յուրացման կամ անօրինական պահպանման կամ Եվրոպական միության ընդհանուր բյուջեի ռեսուրսների անօրինական նվազման, ii) նույն ազդեցությամբ՝ տեղեկատվության չհրապարակում, և iii) այդ միջոցների ապօրինի յուրացում նախապես սահմանված նպատակներից բացի այլ նպատակների համար:
Դրամաշնորհ	նշանակում է՝ Գործակալության կողմից սույն Համաձայնագրի համաձայն տրամադրված միջոցներ՝ կետ 2-ում (Դրամաշնորհ, նպատակ և օգտագործման պայմաններ) սահմանված առավելագույն մայր գումարի չափով:
Անօրինական ծագում	նշանակում է՝ միջոցներ՝ ձեռք բերված՝ ցանկացած նախադեպային հանցագործության կատարման արդյունքում, ինչպես մատնանշվում է «FATF 40» հանձնարարականների բառարանում "*catégories désignées d'infractions*"-ի ներքո (http://www.fatfgafi.org/media/fatf/documents/recommendations/Recommandations_GAFI.pdf), – Կաշառակերության որևէ ակտի միջոցով կամ – Եվրոպական համայնքի ֆինանսական շահերի նկատմամբ որևէ խարդախության միջոցով, եթե կամ, երբ կիրառելի է:
Ապահովագրական քաղաքականություն	նշանակում է՝ ապահովագրական քաղաքականություն, որը պետք է Վերջնական շահառուն որդեգրի և ապահովի Ծրագրի իրականացման առնչությամբ՝ Գործակալության համար ընդունելի ձևով:

Ամբողջականության մասին հայտարարություն	Նշանակում է՝ ամբողջականության, իրավունակության և բնապահպանական ու սոցիալական պատասխանատվության մասին հայտարարություն, որի ձևը սահմանված է Գնման ուղեցույցների հավելվածներում: Նմանատիպ հայտարարություն պետք է տրամադրվի մրցույթի ցանկացած մասնակցի կամ թեկնածուի կողմից՝ Գնման ուղեցույցների կետ 1.2.3-ում սահմանված դրույթներին համապատասխան:
Էական բացասական ազդեցություն	նշանակում է՝ էական բացասական ազդեցություն. – Ծրագրի վրա՝ այնքանով, որ այն կվտանգի սույն Համաձայնագրի և Ծրագրի փաստաթղթերի համաձայն Ծրագրի շարունակականությունը, – Շահառուի բիզնեսի, ակտիվների, ֆինանսական կարգավիճակի կամ սույն Համաձայնագրի և Ծրագրի փաստաթղթերի շրջանակներում նրա պարտավորությունների կատարման վրա, – Սույն Համաձայնագրի և որևէ Ծրագրի փաստաթղթերի վավերության կամ կիրառելիության վրա:
Ենթադրամաշնորհային համաձայնագիր	նշանակում է՝ համաձայնագիր, որը սահմանում է ժամկետներ ու պայմաններ, որոնց համաձայն՝ Շահառուն պետք է Դրամաշնորհի միջոցները ենթադրամաշնորհով ամբողջապես կամ մասամբ տրամադրի Վերջնական շահառուին:
Գործարքի համաձայնագիր (եր)	նշանակում է՝ Ծրագրի առնչությամբ Վերջնական շահառուի և մեկ կամ մի քանի Կապալառուների միջև կնքված՝ ծառայության (ությունների) համաձայնագիր (եր):
Գնումների ուղեցույցներ	նշանակում է՝ Գործակալության կողմից օտարերկրյա պետություններում ֆինանսավորվող, սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվին լիիրավ ուժի մեջ գտնվող գնումներին վերաբերվող ուղեցույցներում պայմանագրային դրույթներ, որոնց օրինակը հասանելի է ինտերնետային կայքում և տրամադրվել է Վերջնական շահառուին:
Ծրագիր	նշանակում է՝ ծրագիր, ինչպես նկարագրված է Հավելված 2-ում (Ծրագրի նկարագրություն):
Ծրագրի հաշիվ	ունի այն նշանակությունը, որ տրված է սույն եզրույթին կետ 3.2.1 (ա)-ում (Ծրագրի հաշվի բացում):

Ծրագրի լիազորություններ	նշանակում է՝ լիազորություններ, որոնք անհրաժեշտ են՝ i) Վերջնական շահառուին՝ իրականացնելու համար Ծրագիրը և կազմելու Ծրագրի բոլոր փաստաթղթերը, որոնց կողմ է նա հանդիսանում, և օգտվել իր իրավունքներից և կատարել իր պարտավորությունները Ծրագրի փաստաթղթերի շրջանակներում, որոնց կողմ է նա հանդիսանում, և ii) որպեսզի Ծրագրի փաստաթղթերը, որոնց կողմ է հանդիսանում Վերջնական շահառուն, որպես ապացույց ընդունելի լինեն Շահառուի իրավասության դատարաններում կամ իրավասու արբիտրաժային տրիբունալներում:
Ծրագրի փաստաթղթեր	նշանակում է՝ բոլոր փաստաթղթերը և, մասնավորապես, համաձայնագրերը՝ ներկայացված կամ կատարված Վերջնական շահառուի կողմից՝ Ծրագրի իրականացման առնչությամբ, որոնցից է հետևյալ փաստաթղթերից յուրաքանչյուրը. - Կապալառուների հետ Ծրագրի իրականացման համար կնքված պայմանագրերը, - Միասնական հարկային օրենսգրքի կիրարկման համար կարճաժամկետ մատրիցա, - միջնաժամկետից երկարաժամկետ հատվածում ճանապարհային քարտեզ՝ TADAT-ի թույլ կողմերը մատնանշելու նպատակով:
Պետական պաշտոնյա	նշանակում է՝ օրենսդրական, գործադիր, վարչական կամ դատական պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ՝ նշանակված կամ ընտրված, որը ծառայում է մշտական կամ ժամանակավոր՝ վճարովի կամ անվճար հիմունքներով՝ անկախ աստիճանից, կամ ցանկացած այլ անձ, որը սահմանվում է որպես պետական պաշտոնյա Շահառուի ներպետական օրենքներով, և ցանկացած այլ անձ, որն իրականացնում է պետական գործառույթ, ներառյալ՝ պետական կազմակերպության կամ ընկերության համար, կամ մատուցում է պետական ծառայություն:
Ժամանակացույց(ներ)	նշանակում է՝ սույն Համաձայնագրի որևէ ժամանակացույց կամ ժամանակացույցներ:
Ծառայություն(ներ)	նշանակում է՝ ուսումնասիրություններ և/կամ տեխնիկական աջակցություն, ինչպես նկարագրված է Հավելված 2-ում (*Ծրագրի նկարագրությունը*):
Ստորագրման ամսաթիվ	նշանակում է՝ բոլոր Կողմերի կողմից սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթիվ:

Տեխնիկական ավարտման ամսաթիվ	նշանակում է՝ Ծրագրի տեխնիկական ավարտի ամսաթիվ, որն ակնկալվում է, որ կլինի 2019 թ. դեկտեմբերի 31-ը:
Էլեկտրոնային կայք	նշանակում է՝ Գործակալության էլեկտրոնային կայք (http://www.afd.fr/) կամ նմանատիպ ցանկացած այլ՝ փոխարինող էլեկտրոնային կայք:

ՀԱՎԵԼՎԱԾ 1Բ. Մեկնաբանություն

ա) «**Ակտիվներ**»-ը ներառում է ներկա և ապագա ամբողջ գույքը, հասույթները և իրավունքները:

բ) «**Շահառուին**», մի «**Կողմի**» կամ «**Գործակալության**» առնչությամբ ցանկացած հղում ներառում է նրա իրավահաջորդներին, ներկայացուցիչներին և շահառուներին:

գ) Սույն Համաձայնագրին կամ այլ փաստաթղթին կամ արժեթղթին արվող ցանկացած հղում առնչվում է սույն Համաձայնագրին կամ փոփոխված, վերահաստատված կամ լրացված նման այլ փաստաթղթի կամ արժեթղթի և, անհրաժեշտության դեպքում, ներառում է ցանկացած փաստաթուղթ, որը փոխարինում է դրան նոր փաստաթղթի տեսքով՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

դ) «**Երաշխիքը**» ներառում է ցանկացած արժեթուղթ կամ ցանկացած երաշխիք, որն անկախ է դրան առնչվող պարտքից:

ե) «**Անձը**» ներառում է ցանկացած անձ, ընկերություն, ձեռնարկություն, գործընկերություն, հոգաբարձուների խորհուրդ, կառավարություն, պետություն կամ պետական գործակալություն կամ որևէ ընկերակցություն կամ դրանցից երկուսի կամ մի քանիսի խումբը (անկախ նրանից՝ հանդիսանո՞ւմ են դրանք առանձին իրավաբանական մարմին, թե ոչ):

զ) «**Կանոնակարգը**» ներառում է ցանկացած կառավարական, միջկառավարական կամ վերպետական մարմնի, վերահսկող մարմնի, կանոնակարգող մարմնի, անկախ վարչական իշխանության, գործակալության կամ որևէ այլ լիազոր մարմնի կամ կազմակերպության որևէ ստորաբաժանման կամ ճյուղի ցանկացած օրենսդրություն, կանոնակարգ, կանոն, որոշում, պաշտոնական հանձնարարական, հրահանգ, պահանջ, խորհուրդ, առաջարկ, որոշում կամ ուղեցույց (անկախ նրանից՝ ունի՞ այն օրենքի ուժ, թե ոչ), որն ազդում է սույն Համաձայնագրի կամ մի Կողմի իրավունքների և պարտավորությունների վրա (ներառյալ՝ արդյունաբերական և առևտրային պետական կազմակերպության ցանկացած կանոնակարգ):

է) Հղումը օրենքի դրույթին վերաբերում է նաև տվյալ դրույթի փոփոխությանը:

ը) Եթե այլ բան նախատեսված չէ, օրվա նշված ժամերը վերաբերում են Փարիզի ժամանակին:

թ) Բաժնի, կետի և Հավելվածի վերնագրերը նպատակ ունեն միայն հեշտացնել հղումը և չպետք է ազդեն սույն Համաձայնագրի մեկնաբանության վրա:

ժ) Եթե այլ բան նախատեսված չէ, սույն Համաձայնագրին առնչվող որևէ այլ փաստաթղթում կամ սույն Համաձայնագրի առնչությամբ տրված ցանկացած ծանուցման մեջ օգտագործվող բառերն ու արտահայտություններն այդ փաստաթղթում կամ ծանուցման մեջ ունեն այն նույն նշանակությունը, ինչ սույն Համաձայնագրում:

ժա) Կետին կամ Հավելվածին արվող հղումները վերաբերում են սույն Համաձայնագրի կետին կամ Հավելվածին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ծրագրի նկարագրություն

ԲԱՂԱԴՐԻՉ 1. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄ

Միասնական հարկային օրենսգիրքն ընդունվել է 2016 թ. հոկտեմբերին և պետք է ուժի մեջ մտնի 2018 թ. հունվարի 1-ին: Կարճաժամկետ տեխնիկական աջակցությունը կարող է նպաստել մի շարք գործողությունների իրականացմանը, որոնք պետք է իրականացվեն նոր հարկային օրենսգրքի ընդունման պահին, գլխավորապես.

- հարկային հայտարարագրերի նոր ձևերի մշակում,
- հարկային ուղեցույցների մշակում, որոնք պետք է հիմնականում օգտագործվեն գործարար հասարակության կողմից,
- հարկատուների և տեսուչների համար վերապատրաստումների սահմանում և ակտիվացում,
- տարածաշրջանում նոր հարկային օրենսգրքի վերաբերյալ օգտակար տեղեկատվության տարածում:

Վերոնշյալ խնդիրներից յուրաքանչյուրի համար մինչև 2017 թ. վերջն իրականացվելիք բոլոր անհրաժեշտ գործողությունները նկարագրող հատուկ կարճաժամկետ մատրիցան և պահանջվող բյուջեն պետք է մշակվեն Պետական եկամուտների կոմիտեի կողմից: Առավելագույնը հիսուն հազար եվրո (50,000 եվրո) արժողությամբ որոշակի գործողություններ, ներառյալ՝ աուդիտի ծախսերը՝ ըստ 3.2 (ե) կետի, կարող են ֆինանսավորվել սույն դրամաշնորհից:

ԲԱՂԱԴՐԻՉ 2. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ. TADAT-Ի ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄ

Հայաստանի հարկային վարչարարության գնահատումը նախաձեռնվել է 2016 թ. նոյեմբերին՝ կիրառելով Հարկային վարչարարության ախտորոշման գնահատման գործիքը (TADAT): TADAT հաշվետվությունը ներկայացվել է 2017 թ. վաղ հունվարին. այնուհետև այն ընդունվել է հայկական իշխանությունների կողմից և հրապարակվել:

TADAT-ը տրամադրում է հարկային վարչարարության կատարողականի գնահատման բազա և սովորաբար օգտագործվում է բարեփոխման առաջնահերթությունները սահմանելու համար: ՊԵԿ-ը պլանավորում է մշակել միջնաժամկետից երկարաժամկետ հատվածում ճանապարհային քարտեզ՝ նշելով այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են գնահատման մեջ բացահայտված թույլ կողմերը մեղմելու համար:

Տեխնիկական աջակցությունը կարող է խթանել մի շարք գործողությունների իրականացումը, որոնք կարող են թիրախավորել հետևյալ առաջնահերթ խնդիրները.

- հարկերի համապատասխանության նկատմամբ վերահսկողության և կիրարկման գործողությունների ազդեցության գնահատում,
- հարկ վճարողի գրանցամատյանի պարզեցում (չգործող կամ ոչ ակտիվ հարկ վճարողների դուրսգրում),
- հիմնական ցուցանիշների ներկայացում, ինչպես, օրինակ՝ ճիշտ ամսաթվին գրանցելու և վճարելու մակարդակը, հավաքագրված և տեղում չգտնվող ապառքների տոկոսային հարաբերակցությունը,
- ԱԱՀ-ի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան վերադարձման գործընթացի բարելավում:

Բաղադրիչ 1-ում և Բաղադրիչ 2-ում նշված գործողությունները կարող են համապատասխանեցվել և թարմացվել՝ ծրագրի կարիքներին համապատասխան:

Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Դրամաշնորհի ներքո ֆինանսավորվող գործողությունների բովանդակությունը նախքան իրականացումը պետք է ներկայացվի ՀՖԳ-ի համաձայնեցմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ինդիկատիվ ֆինանսավորման պլան

ՄԱՍ I. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆ

	Գումար (եվրո)
ԲԱՂԱԴՐԻՉ 1. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ. միասնական հարկային օրենսգրքի կիրարկում Աուդիտի ծախսեր	50,000
ԲԱՂԱԴՐԻՉ 2. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ. TADAT-ի եզրահանգումների բավարարում	450,000
ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ	500,000 եվրո

ՄԱՍ II. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱԽՍԵՐ

Դրամաշնորհը ֆինանսավորելու է «մտավոր» ծառայությունները ու հոգալու է աուդիտի ծախսերը:

ՄԱՍ III. ՈՉ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱԽՍԵՐ

Դրամաշնորհը չի հոգալու ուղղակի կամ անուղղակի հարկերի վճարումը: Շահառուն պարտավորվում է ֆինանսավորել Համաձայնագրի ներքո ստորագրված՝ բոլոր գնման պայմանագրերի ցանկացած ուղղակի կամ անուղղակի հարկ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Նախապայմաններ

Ներքոնշյալը վերաբերում է Շահառուի կողմից որպես նախապայման տրամադրված բոլոր փաստաթղթերին.

- Եթե ներկայացված փաստաթուղթը բնօրինակ չէ, այլ պատճեն է, Գործակալությանը պետք է տրամադրվի բնօրինակի վավերացված պատճենը,
- փաստաթղթի վերջնական տարբերակը, որի նախագծային տարբերակը նախկինում ուղարկվել է Գործակալությանը և համաձայնեցվել է նրա հետ, չպետք է էապես տարբերվի համաձայնեցված նախագծային տարբերակից,
- այն փաստաթղթերը, որոնք նախապես չեն ուղարկվել Գործակալությանը և համաձայնեցվել վերջինիս հետ, պետք է ընդունելի լինեն Գործակալության կողմից:

ՄԱՍ Ի. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ, ՈՐ ՊԵՏՔ Է ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ԼԻՆԵՆ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Շահառուն Գործակալությանն է ներկայացնում Շահառուի երկրի օրենսդրության համաձայն պահանջվող համապատասխան որոշումների վավերացված պատճենները ստորագրության իր նմուշի հետ միասին, որոնք հաստատում են սույն Համաձայնագրի դրույթները և դրա կատարումը և լիազորում կոնկրետ անձի կամ անձանց՝ իրագործելու սույն Համաձայնագիրն իր անունից:

ՄԱՍ II. ԱՌԱՋԻՆ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ [ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ]

1) Շահառուի կողմից Գործակալությանն են տրամադրվում հետևյալ փաստաթղթերը.

   i) Սույն Համաձայնագրի հետ կապված որևէ հայտ ներկայացնելու կամ գրանցելու, սույն Համաձայնագրի ներկայացման կամ հրատարակման պահանջների և ցանկացած դրոշմատուրքի, գրանցման վճարների կամ նմանատիպ պարտավորությունների վճարման մասին ապացույց, ըստ անհրաժեշտության:

   ii) Շահառուի՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի կողմից տրված վավերագիր, որով գրանցված է այն անձը (անձիք), ով (ովքեր) լիազորված են Շահառուի և Վերջնական շահառուի անունից ստորագրելու Մասհանման հայտերը և սույն Համաձայնագրի առնչությամբ ցանկացած վկայագիր և Շահառուի անունից իրականացնելու սույն Համաձայնագրի շրջանակներում բոլոր մյուս միջոցառումները և/կամ ստորագրելու բոլոր մյուս անհրաժեշտ փաստաթղթերը՝ սույնով նշված վավերագրում նշված յուրաքանչյուր անձի ստորագրության նմուշների հետ միասին:

   iii) Գործակալությանը համաձայնության համար ներկայացված, Շահառուի և Վերջնական շահառուի կողմից պատշաճ կերպով ձևակերպված Ենթադրամաշնորհային համաձայնագրի վավերացված օրինակը:

   iv) Գործակալությանը համաձայնության համար ներկայացված, Վերջնական շահառուի և Կապալառուի(ների) կողմից պատշաճ կերպով ձևակերպված՝ Գործարքի համաձայնագրի վավերացված օրինակը:

2) Շահառուի կողմից Գործակալությանը հետևյալ փաստաթղթի վավերացված օրինակի տրամադրում. սույնով յուրաքանչյուր Կողմի կողմից պատշաճ կերպով

ստորագրված միասնական հարկային օրենսգրքի կիրարկման համար կարճաժամկետ մատրիցան:

3) Շահառուի կողմից Բաղադրիչ 1-ի գործողությունների ծրագրի առնչությամբ Գործակալության համաձայնության ստացում:

ՄԱՍ III. ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ [ՈՒՂՂԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ]

1) Շահառուն Գործակալությանն է տրամադրում հրահանգները (մասնավորապես՝ համապատասխան կապալառուի հաշվի վերաբերյալ տեղեկատվություն), որոնք անհրաժեշտ են երրորդ կողմի կապալառուին մասհանումներն ուղղակիորեն փոխանցելու համար, եթե պահանջվում է, և

ա) Ուղղակիորեն վճարել պահանջվող Մասհանման առնչությամբ՝ Պայմանագիրն ու օրդերի ձևերը ցանկացած պլանի և քվոտայի հետ միասին (եթե կիրառելի է), որոնք նախկինում տրամադրվել են Գործակալությանը Գնման ուղեցույցներին համապատասխան և ինչպես սահմանվում է դրանց մեջ, և

բ) Գործակալության համար ձևով և բովանդակությամբ ընդունելի ցանկացած հաշվետվություն, հաշիվ-ապրանքագիր կամ միջանկյալ վճարման հարցում, որը կարող է տրամադրվել վավերացված պատճենների կամ կրկնօրինակների ձևով:

2) Շահառուն տրամադրում է հետևյալ Ծրագրի փաստաթղթի վավերացված օրինակը՝ սույնով յուրաքանչյուր Կողմի կողմից պատշաճ կերպով ստորագրված միջնաժամկետից երկարաժամկետ հատվածի՝ TADAT-ի թույլ կողմերին հասցեագրելու համար ճանապարհային քարտեզը:

3) Բաղադրիչ 2-ի ծրագրի գործողությունների առնչությամբ Գործակալության Շահառուի կողմից համաձայնության ստացում:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. Առաջընթացի հաշվետվության ձև

I. Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի ամփոփ տեղեկատվություն և համատեքստ

II. Հաշվետվու ժամանակահատվածում իրականացված գործողությունների ամփոփ տեղեկատվություն

III. Հիմնական ձեռքբերումները, Ծրագրի արդյունքները և ցուցանիշները

IV. Գործողության ֆինանսական հաշվետվություն

V. Հաջորդ ժամանակահատվածի համար կանխատեսված աշխատանքային պլան

ՀԱՎԵԼՎԱԾ 6. Տեղեկատվություն, որը կարող է հրապարակվել Ֆրանսիայի Կառավարության ինտերնետային կայքում և վարկատուի ինտերնետային կայքում

1. Ծրագրին առնչվող տեղեկատվություն
   - ՀՖԳ գրանցամատյանում թիվ և անվանում
   - Նկարագրություն
   - Գործարկող ոլորտ
   - Իրականացման վայր
   - Ակնկալվող մեկնարկի ամսաթիվ
   - Տեխնիկական ավարտի ակնկալվող ամսաթիվ
   - Իրականացման ընթացքը՝ թարմացված կիսամյակային կտրվածքով
2. Ծրագրի ֆինանսավորմանն առնչվող տեղեկատվություն
   - Ֆինանսավորման տեսակը (վարկ, դրամաշնորհ, համաֆինանսավորում, պատվիրակված ֆինանսական միջոցներ)
   - Դրամաշնորհի հիմնական գումար
   - Դրամաշնորհի գումարը, որը մասհանվել է (թարմացվում է, երբ իրականացվում է Ծրագիրը)
3. Այլ տեղեկատվություն
   - Գործարքի մասին տեղեկատվության ծանուցում և/կամ փաստաթուղթ, որով ներկայացվում է սույն աղյուսակին կցված գործարքը:

ՀԱՎԵԼՎԱԾ 7. Բնապահպանական և սոցիալական փաստաթղթերի ոչ սպառիչ ցանկը՝ ES բողոքների կառավարման ընթացակարգերի առնչությամբ, որոնք շահառուն թույլատրում է հրապարակել

- Բնապահպանական և սոցիալական հարցերով նախնական հաշվետվություն
- Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում (ESIA)
- Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (ESMP)
- Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ (ESMF)
- Վերաբնակեցման գործողությունների ծրագիր (RAP)
- Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ (RPF)
- Բնապահպանական և սոցիալական ներգրավվածության պլան (ESEP)
- Բնապահպանական և սոցիալական սահմանափակ գնահատում
- Բնապահպանական և սոցիալական գործողությունների սահմանափակ ծրագիր
- Բնապահպանական և սոցիալական իրագործելիության ուսումնասիրությունից գլուխ
- Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի հաշվետվություններից գլուխներ
- ESEP իրականացման մոնիտորինգի հաշվետվություններ